

Երևանում գերմաներենի ուսուցման նոր կենտրոն է բացվել



17 ապրիլի 2012 - 17:48 AMT

PanARMENIAN.Net - Երևանում այսօր բացվել է գերմաներեն լեզվի ուսուցման նոր կենտրոն, որը Հայաստանում հանդես է գալիս որպես Գյոթեի անվան ինստիտուտի ներկայացուցիչը և գործընկերը: Բացման արարողությանը մասնակցել են ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանն ու պաշտոնական այցով մեր երկրում գտնվող Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գերատեսչության պետնախարար Կորնելիա Պիպերի գլխավորած պատվիրակությունը:

ԿԳՆ-ից հայտնում են, որ մինչ բացման արարողությունը՝ նախարար Արմեն Աշոտյանն ու Գերմանիայի ԱԳ պետնախարար Կորնելիա Պիպերը պաշտոնական հանդիպում են ունեցել, որի ընթացքում քննարկվել են հայ-գերմանական կրթական համագործակցությանն ու հեռանկարներին առնչվող հարցեր: Կարևորվել է գերմաներենի՝ որպես օտար լեզվի ուսուցման որակի բարելավումը: Նախարարը պատրաստակամություն է հայտնել աջակցելու, որպեսզի գերմաներենի ուսուցումը Հայաստանում դրվի ավելի լավ հիմքերի վրա: Նախարար Արմեն Աշոտյանն առաջարկել է Հայաստանում գերմանական կողմի աջակցությամբ հիմնել գերմաներենի խորացված ուսուցմամբ ավագ դպրոց: Գերմանիայի պետնախարարը շնորհակալություն է հայտնել ՀՀ ԿԳ նախարարին՝ առաջարկի համար:

Հանդիպման ընթացքում ՀՀ ԿԳ նախարարը ներկայացրել է կրթության զարգացման հեռանկարներն ու բարեփոխման միտումները: Արմեն Աշոտյանը նշել է, որ Հայաստանն ակտիվ գործունեություն է ծավալում Բոլոնիայի գործընթացի շրջանակում և 2012-15 թվականներին ստանձնել է Բոլոնիայի քարտուղարությունը:

Քանի որ այս տարի Հայաստանը նշում է գրատպության 500-ամյակը, իսկ Երևանը հռչակվել է գրքի համաշխարհային մայրաքաղաք, նախատեսվում են տարբեր միջոցառումներ. «Մեզ համար հաճելի կլինի, որ գերմանական գիրքը նույնպես ներկայացված լինի մեր երկրում», -ասել է ՀՀ ԿԳ նախարարը: Այնուհետև Կորնելիա Պիպերը և Արմեն Աշոտյանը մասնակցել են Գերմաներեն լեզվի ուսուցման կենտրոնի բացմանը: ՀՀ ԿԳ նախարարը, շնորհավորելով նորաբաց կենտրոնի մուտքը կրթական համակարգ, նշել է, որ վերջին մի քանի տարիներին հայ-գերմանական կրթական ծրագրերի ծավալը եռակի աճել է: «Գերմանիան մեր կարևոր կրթական գործընկերներից է: Մեր արժեհամակարգը խարսխված է կրթության վրա, ինչը կարևոր հանգամանք է եվրոպական ինտեգրացիայի ճանապարհին: Ես ուզում եմ հույս հայտնել, որ այս կենտրոնը կնպաստի, որ Հայաստանում բացվի Գյոթեի ինստիտուտի մասնաճյուղ», -նշել է Արմեն Աշոտյանը:

Գերմանիայի ԱԳ պետնախարար Կորնելիա Պիպերը, իր ելույթում կարևորելով կենտրոնի բացումը, շեշտել է. «Ես շատ ուրախ եմ, որ իմ առաջին պաշտոնական այցը Հայաստան համընկել է այս կենտրոնի բացմանը, ինչը երկկողմ քաղաքական հարաբերությունների արդյունք է: Ես հուսով եմ, որ Գերմաներեն լեզվի նորաբաց կենտրոնը կխթանի երկկողմ կրթական քաղաքականության զարգացմանը և կնպաստի, որ գերմաներենը Հայաստանի քաղաքացիների համար դառնա արդյունավետ հաղորդակցության միջոց»:

Գերմաներեն լեզվի ուսուցման կենտրոնի տնօրեն Նելլի Սողոմոնյանը տեղեկացրել է, որ կենտրոնում գործում է նաև գրադարան և ժամանակակից գրականությամբ համալրված ընթերցասրահ: Այն հնարավորություն կընձեռի նորագույն ուսումնական նյութերի և տեխնոլոգիաների կիրառմամբ սովորել գերմաներեն: Կենտրոնում կազմակերպվելու են գերմաներենի պարապմունքներ, իրականացվելու են մասնագիտական խորհրդատվություն և մասնագետների փոխանակման ծրագրեր. «Համոզված եմ՝ Գերմաներեն լեզվի ուսուցման կենտրոնը հայ-գերմանական մշակութային երկխոսության լրացուցիչ հարթակ կհանդիսանա: Այստեղ նախատեսվում են նաև մշակութային տարբեր միջոցառումներ կազմակերպել, որոնք կենտրոնը նաև հասարակական երկխոսության նոր հնարավորությունների և հանդիպումների հաճելի վայր կդարձնեն»:

<http://www.panarmenian.net/arm/news/103491/>